

„Мы живем в такое время, когда высшее призвание человека состоит в том, чтобы не только объяснить, но и изменить мир — сделать его лучшим, более интересным, более осмысленным, полнее отвечающим потребностям жизни“.

И. В. МИЧУРИН

1855—27/X—1955

Սովետական հասարակայնությունը և ամբողջ աշխարհի պրոգրեսիվ մարդկությունը լայնորեն նշում են ռուս խոշոր բիոլոգ-մատերիալիստ, բնության մեծ վերափոխիչ ու ճարտարապետ Իվան Վլադիմիրովիչ Միչուրինի ծննդյան հարյուրամյակը:

Պատմությանը հայտնի են գիտության պանծալի ոչ հիշ թվով մարդիկ, որոնք հրաժարվելով հետևել հաստատված տրադիցիաներին, վճռականորեն պայքարել են ամեն տեսակ հարացածության ու անշարժության դեմ, նորանոր ուղիներ են հարթել բնության օրենքների ճանաչման ասպարեզում և դրա համար էլ վաստակել են պրոգրեսիվ մարդկության սերն ու շնորհակալությունը: Բայց ժողովրդի ավելի մեծ երախտագիտությանն արժանացել են նրանք, ովքեր սովորեցրել են ոչ միայն այն, թե ինչպես է կառուցված աշխարհը, այլև թե ինչպես պետք է փոխել այն՝ բնության տարերային ուժերը նվաճելու, այդ ուժերը աշխատավորությանը ծառայեցնելու համար: Գիտության այդ փառաբանված գործիչների մեջ պատվավոր տեղ է գրավում ռուս նշանավոր բիոլոգ, սովետական պանծալի հայրենասեր ԻՎԱՆ ՎԼԱԴԻՄԻՐՈՎԻՉ ՄԻՉՈՒՐԻՆԸ: Նա իր ամբողջ կյանքը նվիրեց իր հայրենիքին, իր ժողովրդին, սենդամբերների առատության համար, աշխատավորների գեղեցիկ և լուսավոր կյանքի համար մղվող պայքարին:

Հայրենասեր գիտնականի ազնիվ և անձնազոհ աշխատանքները տվեցին հիանալի արդյունքներ: 60 տարվա գիտական գործունեության ընթացքում Միչուրինը ստացել է բույսերի ավելի քան 300 տեսակներ և սորտեր:

Միչուրինը մեզ թողել է արժեքավոր ժառանգություն՝ կենդանի բնությունը պլանաչափորեն վերափոխելու հզոր թեորիան: Օրգանիզմների զարգացման օրինաչափությունների խոր իմացության վրա հիմնված այդ թեորիան նոր, բարձր էտապ կազմեց ստեղծագործական դարվինիզմի զարգացման մեջ, իրավացիորեն ստանալով միչուրինյան մատերիալիստական բիոլոգիական գիտության անունը:

Միչուրինյան մատերիալիստական բիոլոգիայի ղեկավար սկզբունքը նրա հիմնադրի նշանաբանն է. «Մենք չենք կարող շնորհներ սպասել բնությունից, մեր խնդիրն է՝ դրանք վերցնել բնությունից»: Այս ավանդը տոգորված է կոմունիստական ոգով, և ոչ միայն գիտության աշխատողներին, այլև գյուղատնտեսության միլիոնավոր պրակտիկներին ստեղծագործական կենդանի աշխատանքի է կոչում ի բարօրություն և ի փառս մեր ժողովրդի:

Վ. Ի. Լենինը ասպարեզ տվեց Միչուրինին, հոգատարություն ցուցաբերեց դեպի մեծ գիտնականը: Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը մեծագույն հոգատարությամբ պայմաններ ստեղծեցին միչուրինյան ուսմունքի հետագա զարգացման համար:

Այժմ, երբ մեր պարտիայի վերջին պլենումների որոշումներից հետո առաջնակարգ տեղ է տրվում գյուղատնտեսության զարգացման հարցերին, է՛լ ավելի մեծանում է բնության մեծ վերափոխիչ Միչուրինի ուսմունքի նշանակությունը, նրա մեթոդների և սկզբունքների կիրառումը մեր ժողովրդական տնտեսության զարգացման բնագավառում:

Միչուրինի կյանքն ու գործունեությունը լավագույն օրինակ է այն բանի, թե որքա՜ն շատ բան կարող է անել դիալեկտիկական մատերիալիզմի ուսմունքով առաջնորդվող գիտնականը, իր հայրենիքի գյուղատնտեսության զարգացման համար: Միչուրինի մեթոդները գործուն մեթոդներ են, որոնք հնարավորություն են տալիս մեր ցանկացած ուղղությամբ զարգացնելու օրգանիզմի հատկությունները և հատկանիշները:

Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը ստեղծել են մեր գիտության համար բոլոր հնարավորությունները՝ այդ ուսմունքը զարգացնելու և կիրառելու նպատակով: Մեզ մոտ գիտությունը դարձել է համաժողովրդական սեփականություն: Բնության վերափոխման գործը Միչուրինից սովորել՝ նշանակում է պայքարել մեր Հայրենիքի առավե՛լ բարգավաճման համար: Այս պատվավոր խնդիրը բխում է մեծ գիտնականի կյանքի հարուստ փորձից: